ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ 1920—1921 ԹԹ. ԱՐՇԱՎԱՆՔՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ 1921 Թ. ՄԱՐՏԻ 16-Ի ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ

Քեմալականները, որոնք մեծ մասամբ նախկին իթթիհադականներ էին և «անկախության համար ազգային պատերազմում» զգալի օգնություն էին ստացել խորհրդային Ռուսաստանից, օգտվելով Անդրկովկասում ստեղծված իրադրությունից, շարունակեցին երիտթուրքերի համաթյուրքական, նվաճողական քաղաքականությունը։

Անդրկովկասի նկատմամբ թուրք ազգայնականների ծավալապաշտ-նվաճողական քաղաքականությունը դրսևորվեց տակավին 1919 թ.՝ Էրզրումի (հուլիսի 23—օգոստոսի 6) և Սըվաչ. (սեպտեմբերի 4—12) համագումարներում։ Դրանց որոշումներում 1918 թ. թուրքական զորքերի կողմից բռնախլված հայկական և վրացական հողատարածքները, որոնք Մուդրոսի պայմանագրով մաքրվել էին թուրքական զորքերից, դիտվում էին Թուրքիայի հողատարածք։ Ավելին, այդ համագումարներում որոշվեց ոչ միայն ցեղասպանությանը մեկուկես միլիոն զոհ տված հայությանը վերջնականապես զրկել Արևմտյան Հայաստանի նկատմամբ ամեն մի իրավունքից, այլև վճռական պայքար մղել Անդրկովկասում անկախ Հայաստանի ստեղծմանը նպատակամղված ամեն մի շարժման դեմ։

Այս որոշումները հիմք դարձան Ստամբուլում 1920 թ. հունվարին համաթյուրքական խորհրդարանում հռչակված «Ազգային ուխտի», որը նախատեսում էր Բաթումի մարզի, Կարսի, Արդահանի և Հայաստանի ու Վրաստանի մի քանի այլ շրջանների ընդգրկումը թուրքական նոր պետականության կազմում։

1920 թ. փետրվարի 6-ին Մ. Քեմալի գլխավորած ներկայացուցչական կոմիտեի նիստում ընդունվեց հետևյալ որոշումը. «Արևելյան ճակատում պաշտոնական կամ կիսապաշտոնական զորաշարժ անցկացնել և սկսել զորքերի կենտրոնացումը՝ կովկասյան արգելապատնեշները թիկունքից լուծարքի ենթարկելու համար»[1]։ Մ. Քեմալն այս որոշման մասին տեղյակ պահեց Արևելյան ռազմաճակատի հրամանատար Կարաբեքիրին, որ արդեն գարնանը նա ավարտեր իր զինյալ ուժերի համալրումն ու վերազինումը՝ Հայաստանի վրա հարձակվելու համար։ Ապրիլի կեսերին Կարաբեքիրը հեռագրեց Անկարայի ղեկավար շրջաններին. «Մոտ օրերս ես պետք է հաղորդեմ այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»[2]։

Սակայն Անկարայի կառավարությունը տվյալ պահին տակավին հույս ուներ գործարքի մեջ մտնել Անտանտի երկրների հետ և այս պատճառով էլ միառժամանակ հետաձգեց Հայաստանի վրա հարձակումը[3]։

Անդրկովկասի նկատմամբ թուրք ազգայնականների նվաճողական-ծավալապաշտ քաղաքականությունը երևում էր նաև Քեմալի կողմից 1920 թ. ապրիլի 26-ին խորհրդային կառավարությանն ուղարկված նամակից, որում խնդրվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել և Թուրքիային նյութապես և ռազմամթերքով օգնել։ Մ. Քեմալի նամակի երկրորդ կետն այսպիսին էր. «Եթե խորհրդային ուժերը ծրագրում են ռազմական գործողու-

---

[1] Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, М., 1934, с. 313.

[2] [illegible] al Kutay, Karabekir Erministani nasil yor etti, Istanbul, 1956, s. 36.

[3] A[illegible] Cebe oy, Mili mücadele ha iralar, Istanbul, 1953, s. 482.

թյուններ սկսել Վրաստանի դեմ, կամ դիվանագիտական ճանապարհով իրենց ազդեցության միջոցով, Վրաստանին հարկադրել միության մեջ մտնելու և ձեռնարկելու Կովկասի տարածքից անգլիացիների վտարումը, ապա թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում կայսերապաշտ (իմպերիալիստական) Հայաստանի դեմ ռազմական գործողությունները և հանձն է առնում հարկադրել Ադրբեջանի հանրապետությանը՝ մտնելու խորհրդային պետության կազմի մեջ»[4]։

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հասկանալով Մ. Քեմալի առաջարկի հետին միտքը, հունիսի 3-ի իր պատասխանում բավականին որոշակի նշեց, որ համաձայն է Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել և պատրաստ է Անտանտի ռազմական միջամտության դեմ պայքարում օժանդակություն ցույց տալ, պայմանով, որ Անկարայի կառավարությունը բարիդրացիական հարաբերություններ պահպանի Անդրկովկասի հանրապետությունների հետ և արդարացի լուծի հողատարածքային վեճերը, ընդ որում, տվյալ հարցում առաջարկվում էր Մոսկվայի միջնորդությունը[5]։ Հունիսի 20-ին իր պատասխանում Մ. Քեմալն ընդգծում էր, որ իր «կառավարությունն ընդունում է Ռուսաստանի Խորհրդային Հանրապետության միջնորդությունը և հետաձգում իր ռազմական գործողությունները Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում»[6]։

Այն, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, ելնելով առաջին հերթին իր իսկ սեփական ռազմաքաղաքական շահերից, դեմ էր թուրք ազգայնականների՝ Անդրկովկասում նախահարձակողական ծրագրերին, երևում է նաև Համամիութենական Կենտգործկոմի հունիսի 17-ի նիստում արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի տված զեկուցումից։ Խոսելով քեմալական Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման մասին, նա ընդգծում էր. «Մենք Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների մեջ մտնում ենք այն պայմանով, որ Թուրքիայի և հարևան ժողովուրդների միջև, ինչպիսին հայ ժողովուրդն է, հաստատվի փոխադարձ սահմանազատում և դադարեցվեն փոխադարձ կոտորածները»[7]։

Ընդունելով Խորհրդային Ռուսաստանի միջնորդության առաջարկը, Անկարայի կառավարությունը համաձայնվեց Մոսկվա ուղարկել հատուկ պատվիրակություն, ջանալով ցույց տալ, թե իբր կողմնակից է տարածքային վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելուն։ Իրականում քեմալականները երբեք չհրաժարվեցին իրենց նախահարձակողական-նվաճողական մտադրություններից և պարզապես պատեհ առիթի էին սպասում՝ հայասպանությունն ավարտին հասցնելու իրենց ծրագրերն իրականացնելու համար։

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Բեքիր Սամի բեյի գլխավորած պատվիրակությունը հուլիսի 19-ին ժամանեց Մոսկվա և մի շարք հանդիպումներ ունեցավ Գ. Չիչերինի ու նրա տեղակալ Լ. Կարախանի հետ, ապա ընդունվեց Լենինի կողմից։ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը մոսկովյան բանակցություններում առաջ քաշեց ազգագրական սահմանների սկզբունքը, որը հիմնվում էր մինչև համաշխարհային պատերազմը գոյություն ունեցած ազգամիջյան փոխհարաբերությունների իրողությունների վրա։ Ելնելով դրանից, խորհրդային կառավարությունն առաջարկեց կազմակերպել (աղգաբնակչության) փոխադարձ վերաբնակեցում այնպես, որ սահմանի երկու կողմերում ստեղծվի միատարր ազգագրական հողատարածք։ Ցարճ ասած, խորհրդային կառավարությունն առաջ քաշեց «թուրքական հին սահմանի այնպիսի ճշգրտում, որի շնորհիվ մի կողմից վերակշռաբար մահմեդական աղգաբնակչությամբ հողատարածքներն անցնեին թուրքերին, իսկ

---

[4] АВП СССР ф. 132—референтура по Турции, п. 3, оп. 2, д. I, лл. II.
[5] Документы внешней политики СССР (далее ДВП СССР), т. 2, М.. 1958. с. 555.
[6] „Die Welt Islam", vol. XVI, Berlin, 1934. s. 27--28.
[7] АВП СССР, т. 2, с. 658.

մյուս կողմից Հայաստանին անցնեին այն հողատարածքները, որտեղ մինչև 1914 թ. հայկական մեծամասնություն էր առկա»[8]։

Բեքիր Սամիի պատվիրակությունը սեղանին դրեց բոլորովին այլ պահանջներ։ Նա ոչ միայն չցանկացավ լսել այն մասին, որ արևմտահայ նահանգներից թեկուզ մեկը հարկ է զիջել, այլև պնդեց հաստատել Բրեստ-Լիտովսկի թալանչիական պայմանագրի հիմամբ ճշտորոշված Թուրքիայի հյուսիս-արևմտյան սահմանները։ Ուրիշ խոսքով, Հայաստանի հանրապետությունը պետք է հարկադրվեր թուրքերին վերադարձնել Կարսի մարզը։ Դրա համար էլ զարմանալի չէ, որ բանակցությունները 1920 թ. ամռանը ձախողվեցին։ Ժամանակակից թուրք պատմաբանները փորձում են մեղքը բարդել Մոսկվայի վրա, թե իբր Մոսկվան «պահանջել է թուրքական հողատարածքները զիջել Հայաստանին»[9]։ Ոմանք նույնիսկ մատնանշում են որոշակի «մեղավորին»՝ Գ. Չիչերինին։ Թևֆիք Բյըքլօղլուն, օրինակ, գրում է. «1920 թ. օգոստոսի 28-ի զրույցի ժամանակ Չիչերինը վերստին պնդեց Վանի և Բիթլիսի վիլայեթների որոշ մասեր Թուրքիայից անջատելու վրա»։ Նույն հեղինակն այնուհետև նշում է, որ «Բարեկամական պայմանագրի» ստորագրումը «ձգձգվեց այն պատճառով, որ Չիչերինը Թուրքիային ընձեռվելիք օժանդակությունը պայմանավորեց Վանի, Բիթլիսի և Մուշի շրջանները հայերին զիջելով»[10]։

Թուրք ազգայնական ղեկավարները, հակառակ իրենց հռչակած սկզբունքների, ամբողջ Հայաստանի նկատմամբ իրենց ստոր ախորժակով հրահրված՝ մերժեցին արդարացի առաջարկություններն ու դրանով իսկ 1920 թ. մոսկովյան բանակցությունները ձախողման դատապարտեցին։

Մոսկվայում 1920 թ. հունիս-հուլիսին տեղի ունեցան խորհրդա-հայկական բանակցություններ։ Հայկական Հանրապետության պատվիրակության ղեկավարն էր Լևոն Շանթը։ Այդ բանակցությունների նախաձեռնողը Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն էր, որը երկու կողմերի համաձայնությամբ Հայաստանի և Թուրքիայի միջև միջնորդի դեր էր խաղում, ձգտելով վերջ տալ հայ-թուրքական ընդհարումներին և երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանային վեճերին։

Սակայն Խորհրդային Ռուսաստանի ջանքերը ազգայնական Թուրքիայի զավթողական քաղաքականության հետևանքով հաջողությամբ չպսակվեցին։ Բեքիր Սամի բեյը, որը լսել չէր ուզում Հայաստանի Հանրապետությանը Արևմըտյան Հայաստանի որևէ վիլայեթ «զիջելու» մասին, ընդգծեց, որ երկու կառավարությունների միջև որպես հարաբերությունների հիմք ծառայում են Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և դրան լրացնող Բաթումի պայմանագիրը։ Նրա բերած փաստարկներն անհիմն էին թեկուզ այն պատճառով, որ նշված պայմանագրերը կնքված էին սուլթանական կառավարության կողմից, որին քեմալական կառավարությունը չի ճանաչել։

Հայաստանի հանրապետության պատվիրակությունն իր հերթին չբավարարվելով Վանի, Մուշի, Բիթլիսի վիլայեթներով, ինչպես այդ առաջարկում էր խորհրդային կառավարությունը, պահանջում էր նաև Թուրքահայաստանի մյուս վիլայեթները։

Լևոն Շանթի գլխավորած պատվիրակության անդամ Հ. Տերտերյանը իր հուշերում գրել է, որ Լ. Կարախանը նրան ցույց տալով Հայաստանի հանրապետության քարտեզը, ասել է. «Դուք դաշնակցական եք, իսկ ես՝ կոմունիստ, բայց մենք երկուսս էլ հայ ենք. մեզ համար թանկ են հայ ժողովրդի շահերը, այժմ համաձայնվենք ձեր հանրապետությանը միացնելու այդ երեք վիլա-

---

8 Նույն տեղում, էջ 726—727։

9 Ali Fuat Cebesoy, Moskova Hatıraları, Istanbul, 1955, s. 35—37.

10 Tarık Bıyıklıoğlu, Atatürk Anadoluda, Ankara, 1959, Istanbul, 1959 s. 20–21.

յեթները, հետո կտեսնենք»[11]։ Հայաստանի պատվիրակությունը չընդունեց այդ առաջարկը և բանակցությունները ձախողվեցին։

Բանակցությունների օրերին խորհրդային կողմն այնքան վստահությամբ էր վերաբերվում թուրքական պատվիրակությանը, որ նրա ղեկավար Բեքիր Սամի բեյը Թուրքիա մեկնելու պատրվակով եղավ Ադրբեջանում, Ինգուշեթիայում և Դաղստանում, ուր զբաղված էր հակախորհրդային պրոպագանդայով։ Նրան օժանդակում էին մուսավաթականները։

Թուրքական պատվիրակության անդամներից Ալի Ֆուադ Ջեբեսոյը փորձում է սքողել Անկարայի կառավարության նախահարձակողական մտադրությունները և բանն այնպես ներկայացնել, որ իբր իրենց պահանջները բացարձակապես օրինական էին, քանի որ իբր թե վերաբերում էին պատմականորեն թուրքական տարածքներին։ Նա գրել է. «Անկարայի կառավարությունը հարևան երկրների նկատմամբ որևէ թշնամական մտադրություն չուներ և ազգային սահմանների շրջանակներում սեփական անկախության և ազատության նվաճումից բացի ուրիշ նպատակ չէր հետապնդում»[12]։

Փաստերն աղավաղելով, թուրք հեղինակները Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը համարում են մոսկովյան բանակցությունների ձախողման պատասխանատու։ Բերելով, օրինակ, ասել է.

«1920 թվականի օգոստոսի 24-ին Մոսկվայում բարեկամության նախնական պայմանագիրը չկնքելու հիմնական պատճառն այն եղավ, որ խորհրդային կողմը մտադրվել էր մեր արևելյան նահանգների հողերը տալ հայ դաշնակներին»[13]։ Այնուհետև փաստերը խեղաթյուրելով, նա փորձում է արդարացնել Հայաստանի դեմ քեմալական նախահարձակումը, այն ներկայացնելով որպես «խաղաղասիրական քայլ»։ Նա գրում է. «Դաշնակցական Հայաստանի դեմ 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին ձեռնարկված ոչ երկարատև պատերազմական գործողությունների նպատակն էր այդ շրջանում խաղաղությունն ու անդորրը հաստատել և կենսագործել մեր ազգային ուխտը»[14]։

Ի դեպ, Մուսաֆա Քեմալն ինքը բազմիցս հաստատել է Հայաստանի վրա նախահարձակման նախապատրաստությունների իրողությունը։ Այսպես, օրինակ, 1920 թ. օգոստոսի 14-ի իր ճառում նա ընդգծել է. «Ազգային Մեծ ժողովի նախարարների խորհրդին լիազորել է գրավել երեք նահանգները (խոսքը Կարսի, Արդահանի և Բաթումի մասին է—Ս. Ղ.), հենց որ հնարավորություն ստեղծվի։ Այդ իսկ պատճառով հունիսի 6-ին մենք արևելյան ղորաբանակին հրամայեցինք գրոհի նախապատրաստվել»[15]։ Սակայն, փաստերից բխում է անհերքելի այն իրողությունը, որ քեմալական կառավարությունը կանխորոք նախապատրաստել և հանգամանորեն մշակել էր Հայաստանի, որպես պետության, ոչնչացման ծրագիրը և սեփական նախաձեռնությամբ էլ սկսել դրա իրականացումը։

Հարկ է նշել, որ ժամանակակից թուրք հեղինակները փորձելով 1920 թ. աշնանը Հայաստանի դեմ Թուրքիայի նախահարձակումը ներկայացնել որպես «ազատագրական պայքարի կարևոր նախադրյալ», բացեիբաց գրում են քեմալականների կողմից այդ պատերազմի նախապատրաստման, ռազմական ուժերի համակենտրոնացման և հարակից հարցերի մասին։ Այս տեսակետից հետաքրքրական է Ալի Ֆուադ Ջեբեսոյի խոստովանությունը։

Իր հուշերում Ջեբեսոյը, Հայաստանի վրա արշավելուց առաջ արևելյան ռազմաճակատում ձեռք բերված նախապատրաստական միջոցառումներին անդրադառնալով գրում է. «Եթե Քյազիմ Կարաբեքիր փաշայի՝ Հայաստանի

---

11 Տե՛ս Ս. Կարապետյան, 1920 թ. Հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965, էջ 11։

12 Ali Fuat Cebesoy, Moskova Hatıraları, s. 90–91.

13 „Belleten", Temmuz, 1961, s. 479.

14 Նույն տեղում։

15 Atatürkün söyle ve demeçleri, cilt I, Istanbul, 1945, s. 93.

վրա շարժվելու առաջարկությունը մայիս ամսին առարկության չհանդիպեր, ապա 1920 թվականի աշնանը, Արևմուտքում տեղի ունեցած կարևոր փոփոխությունների ժամանակաշրջանում (հույների դեմ) արևմտյան ռազմաճակատը կրկնակի ուժեղ կլիներ»[16]։ Հեղինակի կարծիքով հենց մայիսին էր առկա «առավել բարենպաստ» այն իրադրությունը, որն անհրաժեշտ էր թուրքական գրոհն սկսելու համար. «1920 թ. մայիսին,—գրում է նա,—հայկական բանակը զբաղված էր բոլշևիկյան ներքին խռովությունը ճնշելու և հյուսիսում ադրբեջանցիներին կասեցնելու գործով։ Մենշևիկյան Վրաստանն ի վիճակի չէր օգնելու Հայաստանին։ Եվ ահա այդպիսի կացության մեջ գտնվող հայերի դեմ կանգնած էին երեք կանոնավոր զորաբանակներ և 15-րդ զորաբանակի կամավորական գնդերը։ Այդ զորքն ի վիճակի էր հայերին արագորեն պարտության մատնել»[17]։

Մոսկովյան բանակցությունների ձախողումից հետո Անկարայի կառավարողները, օգտվելով այն հանգամանքից, որ Խորհրդային Ռուսաստանը հարկադրվել էր լեհական ներխուժման դեմ պայքարելու նպատակով որոշ զորամասեր Կովկասից հետ կանչել, ձեռնարկեցին Անդրկովկասի նկատմամբ իրենց հարձակողական ծրագրերի կենսագործումը։

Սեպտեմբերի 8-ին Մ. Քեմալի նախագահությամբ կայացավ ռազմական գերագույն խորհրդի նիստ, որտեղ լսվեց Կարաբեքիրի հաղորդումը՝ արևելյան ռազմաճակատում թուրքական զորքերի նախապատրաստությունների վերաբերյալ։ Զեկուցողը ժողովականներին վստահեցրեց, որ իր հրամանատարության ներքո գտնվող 4 զորաբանակները և մի քանի հազար բաշիբոզուկները լիուլի բավարար են՝ իր առաքելությունը գլուխ բերելու համար։

Տակավին 1919 թ. ամռանը Քյազիմ Կարաբեքիրի պատվիրակները մշտական կապ էին պահպանում Բաքվի մուսավաթական կառավարության հետ։ 1919 թ. վերջերին Բաքու ժամանեց թուրքական զորամիավորումներից մեկի նախկին հրամանատար Խալիլ փաշան։ Մ. Քեմալի կողմից նրան առաջադրանք էր տրվում ապահովել խորհրդային իշխանության ռազմական, նյութական և բարոյական աջակցությունն իր շարժմանը։ Այդ ժամանակ Ադրբեջանում աղատ գործողության իրավունքից օգտվում էր Նուրի փաշան, որը ղեկավարում էր մուսավաթականների հետ սերտորեն շաղկապված և համաթյուրքական քարոզչություն ծավալած «Թուրքական ժողովրդային պատվիրակություն» կոմիտեն։ Բաքվում էր գտնվում նաև մոլեռանդ պանթյուրքական դոկտոր Ֆուադ Սաբիտ օղլուն՝ Էրզրումի համագումարի կազմակերպիչներից մեկը։ 1920 թ. նա իրեն հայտարարեց Բաքվում թուրքական գլխավոր ներկայացուցիչ։ Այդ տարվա առաջին ամիսներին թուրքական գործակալներն արդեն ամրապնդել էին Անատոլիայի ու Բաքվի կապը և թուրք ազգայնականների կողմից Հայաստանի բռնագրումը համարում էին մոտալուտ «հրաշալի գործ»։

Թուրքերն իրենց ցեղասպանական-նվաճողական գործողություններն իրականացնում էին Անտանտի դեմ պայքարի կարգախոսով, իսկ բուն Հայաստանի դեմ պատերազմը հռչակում էին որպես «Անտանտի դաշնակից հայկական իմպերիալիզմի դեմ պայքար»։ Քեմալական հրամանատարությունը հայտարարեց, որ իր զորքերը մարտնչում են «Անտանտի գործակալ դաշնակների» դեմ, հանուն «դաշնակների լծից հայ ժողովրդի ազատության»։ Ամենուրեք և ոչ առանց հաջողության տարածվում էին լուրեր այն մասին, որ քեմալականները իբր ճիշտ ու ճիշտ այնպիսի հեղափոխականներ են, ինչպիսիք բոլշևիկներն են։

Խորհրդային Ռուսաստանի պաշտոնական շրջանները փառաբանում էին քեմալական շարժումը, չտեսնելու տալով նրա հակախորհրդայնությունն ու ծավալապաշտ նկրտումները։ Քեմալական Թուրքիան դիտվում էր որպես

---

[16] Ali Fuat Cebesoy, Milli mücadele hatıraları, s. 474.

[17] Նույն տեղում։

Արևելքում սոցիալրսսական հեղափոխության դրոշակակիր։ Բոլշևիկյան կուսակցությաս ղեկավարության համար փոքր ժողովուրդների հարց գոյություն չուներ։ Ահա թե ինչ է գրել «Ռզվեստիա» թերթը 1920 թ. նոյեմբերի 22-ին. «Անդրկովկասի կոմունիստական կուսակցությունը, որի համար գոյություն չունես ազգային հարցեր, որպես այդպիսիք, պետք է իրադարձությունները գնահատի համաշխարհային հեղափոխության հիմքերի ամրապնդման տեսակետից։ Բայց Հայաստանի դաշնակցականները, այնպես էլ Վրաստանի մենշևիկները սեզ համար այս խոչընդոտող քարակույտն են, որից հարկ է մաքրել հեղափոխության դեպի Արևելքի ճանապարհը։ Կուսակցության բոլոր ուժերը ներդրված են այդ խոչընդոտը վերացնելու գործին։ Այդ նույն նպատակն է հետապնդում նաև Խորհրդային կենտրոնական իշխանությունը»։ Բոլոր դեպքերում սիամիտները հրապուրվեցին քեմալականների «հեղափոխականության» խայծով և ընկան Թուրքերի թակարդը։ Քեմալականների քարոզչության հաջողությանը քիչ չնպաստեցին Հայաստանի հեղկոմի կողմից ղեկավարող հայ բոլշևիկները, որոնք դաշնակցականների հեղինակությունն ամեն գնով գցելու իրենց ջանքերում մինչև կոկորդները խրվեցին ազգամնաս դիրքորոշման մեջ։ Այսպես, Հայաստանի հեղկոմի հույժ գաղտնի փաստաթուղթը՝ ուղղած հայ կոմունիստներին և հատկապես Հայաստանի հանրապետության՝ քեմալական զավթիչների դեմ պայքարող զորքերին, պնդում էր. «1. Ներկա Թուրքիան այլևս նախկին սուլթանական Թուրքիան չէ և Հայաստանի հանդեպ ագրեսիվ նպատակներ չունի։

2. Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի հետ դաշնակից է և պայքարում է իր ազատության համար ընդդեմ իմպերիալիստական պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Հունաստանի։

3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա այդ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր արևելքում և սրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, իսկ ընդհակառակը, Հանրապետական Հայաստանի պարտությամբ կարագացվի ողջ Անդրկովկասի, ապա նաև Արևելքի խորհրդայնացումը։

4. Հայ բոլշևիկ-կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը։

Այս նպատակի համար պետք է. 1. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, այն է՝ ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին, բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող Թուրքական զինվորների վրա, այլ, լքելով դիրքերը վերադառնան թիկունք, գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց։

2. Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող Թուրքական ասկյարները հեղափոխական ասկյար են, որոնք ոչ միայն իրենց Թույլ չեն տա որևէ բռնի գործողություն պարտված երկրի վերաբերյալ, չեն վնասի խաղաղ ազգաբնակչությանը, այլև կօժանդակեն աշխատավոր հայ ժողովրդին ազատելու իմպերիալիստների գործակալ դաշնակցականների տիրապետությունից։

3. Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից օգտվելով, Հայաստանն անմիջապես կկապվի Խորհրդային Ռուսաստանի հետ, ընդմիշտ վերջ կտրվի պատերազմին, և սովից ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլինա Ռուսաստանի հացով և մասնակից կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին»[18]։

Այս ազգադավ փաստաթուղթը ստորագրել են Սարգիս Կասյանը, Ասքանազ Մռավյանը, Ավիս Նուրիջանյանը, Շավարշ Ամիրխանյանը, Իսահակ Դովլաթյանը և Աշոտ Հովհաննիսյանը։

---

18 Տե՛ս «Литературная Армения», 1991, № 1, էջ 74։

Երբ Բաքվում 1920 թ. սեպտեմբերին ընթանում էր Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը, տեղի ունեցավ այդ կազմակերպության նախագահության նիստը, որն ընդունեց «Եզրակացություն» կոչվող հույժ գաղտնի փաստաթուղթ։ Այն սկզբից մինչև վերջ հագեցված է հակահայկական ոգով։ Հայաստանի Հանրապետությունն այնտեղ ներկայացված է որպես ագրեսիվ ուժերի կենտրոն, հարևան երկրների համար մշտական վտանգի աղբյուր։ Այդ փաստաթղթում հայ ժողովրդի շահերն ըստ էության, զոհաբերում էին «համաշխարհային հեղափոխության հաղթանակին»[19]։

Քեմալական զավթիչների օգտին էին գործում հատկապես Լենինը, Ստալինը և Տրոցկին։ Միայն վերջերս մատչելի դարձած արխիվային փաստաթղթերը վկայում են ու հաստատում, թե Ստալինն ինչ չարագուշակ դեր է խաղացել Հայկական հարցում, ինչպիսի աղետալի հետևանքներ են ունեցել նրա ապակողմնորոշող հեռագրերն ու նամակները։ 1920 թ. նոյեմբերի 5-ին օրինակ, երբ թուրքերն արդեն տիրել էին Սարիղամիշին ու Կարսին և ընդհուպ մոտեցել Ալեքսանդրապոլին, նա Բաքվից հեռագրել է Լենինին. «Ձեզ կողմնորոշելու համար հաղորդում եմ... դրությունը Թուրքիայում պարզ չէ. այն կարող է վտանգավոր դառնալ, եթե տեղի ունենա Քեմալի համաձայնությունը Անտանտի հետ, քանի որ Քեմալի չեզոքացումը կդյուրացնի դեպի Բաքու Անտանտի ղինարշավը։ Հետևաբար, առանց մանրակրկիտ հետազոտության և Թուրքիայում իրադարձության պարզաբանման, պետք չէ Հայաստանի հետ կնքել պայմանագիր, որը Հայաստանին, նշանակում է՝ Անտանտին կհանձնի մուսուլման ազգաբնակչությամբ ստրատեգիական կարևորագույն մի շրջան և որը մեզ կներքաշի Թուրքիայի հետ առճակատման մեջ։ Անհրաժեշտ է առայժմ ձգձգել Հայաստանի հետ պայմանագրի կնքումը, ձեվացնելով, որ Հայաստանի համար ձեռնտու խաղաղություն ենք ցանկանում, իսկ հետագային ամեն ինչ պարզ կլինի»[20]։

Թուրքական զորքերը միմյանց հետևից գրավեցին Կարսի մարզը, Ալեքսանդրապոլը, Սուրմալուի գավառը և երկաթուղու Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա հատվածը, կտրելով Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը։ Նոյեմբերի 7-ին Ստալինը Բաքվից հեռագրում է Լենինին և Չիչերինին. «Կարսը, իրոք, գրավված է, Ալեքսանդրապոլը հավանական է կգրավվի, ըստ որում թուրքերն իբր ավելի հեռու չեն գնալու այն գծից, որը հայտնի է Մոսկվային։ Կարծում եմ, որ այս տեղեկություններն ուշացած են, քանի որ թուրքերն արդեն գիծն անցել են և բացի այդ ցանկանում ու հետապնդում են իրենց սեփական նպատակները, ուրիշ խոսքով՝ ըստ երևույթին ցանկանում են Հայաստանին հարկադրել հրաժարվելու Սևրի պայմանագրից և Անտանտին էլ կատարված իրողության առաջ դնել քեմալականների՝ Կոստանդնուպոլսում նախատեսվող բանակցությունների կապակցությամբ»[21]։

Դեռ մինչև թուրքական զորքերի Հայաստան ներխուժումը Անկարայի և Խորհրդային Ռուսաստանի կառավարությունները պայմանավորված են եղել այն բանի շուրջ, որ հարձակման անցնելու դեպքում թուրքերը Սարիղամիշի գծից այս կողմ չանցնեն։ Այդ են վկայում Թուրքիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական բաժնի պետ Հիքմեթի հաղորդագրություններից մեկի հետևյալ տողերը. «Իրադրությունների ճնշման ներքո հարկադրվեցինք հարձակողականի անցնել Հայաստանի դեմ, հնարավորություն չունենալով մեր առաջխաղացքը քննարկել Խորհրդային Ռուսաստանի հետ։ Համաձայն Խորհրդային Ռուսաստանի հետ մեր համատեղ որոշման, հարձակման դեպքում մենք Սարիղամիշից այն կողմ պետք չէ անցնենք»[22]։

---

19 Հայաստանի Հանրապետության կենտրոնական պետական արխիվ (այնուհետև՝ ՀՀ ԿՊԱ), ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 1—3։

20 ИМЛ ЦПА ф. 558, оп. I, д. 1987, л. 1.

21 Նույն տեղում, ֆ. 558, ց. 1, 1989, թ. 1։

22 ՀՀ ԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 94։

Անկարայի և Մոսկվայի միջև նման պայմանավորվածության գոյությունը հաստատել է նաև Ստալինը՝ Կովկասյան բյուրոյի 1920 թ. նոյեմբերի 4-ի նիստում։ Նա ասել է. «Քեմալի համար հարցը դրված է այնպես, որ նա պիտի հարձակվի մինչև Սարիղամիշ։ Մոսկվայից Քեմալին հեռագիր է ուղարկված, սակայն հայտնի չէ, թե նա ստացել է, թե ոչ»[23]։ Այն, որ այդպիսի պայմանավորվածություն, իրոք, եղել է, հաստատվում է նաև թուրք զավթիչների դեմ ռազմական օժանդակություն ընձեռելու Հայկական կառավարության խնդրանքին Լենինի պատասխանով. «Ռուսաստանը պատրաստ է կարգն ու անվտանգությունը պահպանելու համար զորք ուղարկել»։ Հենց այստեղ էլ, Հայաստանի հասցեին ամենայն համակրանք հայտնելով Լենինը չզլացավ Կարսի վերաքննման հայ ժողովրդին խորհուրդ տալ՝ «Մոռանալու իր հավակնությունները, քանի որ Կարսի սարը երբեք հայկական չի եղել»[24]։

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարների մեջ կային նաև ազնիվ, տեղի ունեցող երևույթներն ու դեպքերը օբյեկտիվորեն գնահատող համաշխարհային հեղափոխության ցնորքից ձեռք կանգնած մարդիկ։ Այդպիսիներից էին Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Ջիչերինը, նրա տեղակալ Լ. Կարախանը և Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը։ Նրանք ամեն կերպ ձգտում էին ցույց տալ, որ քեմալականները Հայաստանի և Վրաստանի նկատմամբ շարունակում են երիտթուրքերի զավթողական, ջարդարարական, պանթուրքական քաղաքականությունը։ Այդ մասին ժամանակին Բ. Լեգրանն ասել է. «Քանի դեռ թուրքերը կշարունակեն իրենց քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, պետք չէ նրանց ընդհանրապես հավատալ»։ Լեգրանն այնուհետև նշել է. «Թուրքերի նվաճողական-ազգայնամոլական նկրտումների առկայությունը Կարս-Ալեքսանդրապոլի իսկ դուցե և Աջարիա-Բաթումի նկատմամբ, առավել կամ նվազ անկասկածելի է»[25]։

Դեպի Հայաստան իրենց զինարշավով քեմալականները նաև նպատակ էին հետապնդում Հայաստանին ջախջախելուց հետո ռազմական միակողմանի ակտով պատռել Սևրի պայմանագիրը և դրանով իսկ ներգործել Թուրքիայի նկատմամբ Անտանտի երկրների քաղաքականության վրա։ Անգլիական «Թայմզ» թերթը 1920 թ. դեկտեմբերի 23-ին այս կապակցությամբ գրում էր. «Մուստաֆա Քեմալը Հայաստան ներխուժեց Կարսն ու Արդահանը բռնագրավելու համար։ Նրան թվաց, որ Հայաստանն իր ձեռքում պահելով, կկարողանա ճնշում բանեցնել Թուրքիայի նկատմամբ Անտանտի և ԱՄՆ-ի քաղաքականության վրա»։

Մինչ թուրքական զորքերը շարունակում էին իրենց ավերիչ արշավը դեպի Հայաստանի խորքը, Հայաստանի Հանրապետության կառավարողները հույսները դրել էին Անտանտի օգնության վրա։ Տակավին սեպտեմբերի 30-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության լիազորը դիմում էր դաշնակից երկրների ներկայացուցիչներին՝ խնդրելով ռազմական և նյութական օժանդակություն ընձեռել։ Նույնատիպ խնդրանքը կրկնվում է նաև հոկտեմբերի 1-ին, 8-ին, 14-ին, 17-ին և 27-ին։ Սակայն դաշնակից տերությունները ամեն անգամ պատասխանում էին, որ տվյալ պահին իրենք ի վիճակի չեն շոշափելի օգնություն հասցնել և որ հայերը պետք է հույսներն իրենց սեփական ուժերի վրա դնեն ու գործեն ինքնուրույն։ Թիֆլիսում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ գնդապետ Ստոքսն Ա. Խատիսյանին ասում է. «Անգլիան ներկայումս անզոր է Հայաստանին իսկական օգնություն ցույց տալու»[26]։ Իսկ Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցիչ Տ. Բեգզադյանի հետ զրույցի ժամանակ նա խորհուրդ է տալիս անձնական հայեցողությամբ գործել, ընդգծելով, որ «Եվրոպան կամ չի ցանկանում, կամ էլ չի կարող օժանդակել և հայերը պետք

---

23 ИМЛ ЦПА ф. 558. оп. I. д. 1986. л. 1—2.

24 «Бюллетень» МИД РСФСР. 23. 02. 1921. с. 31.

25 АМИД СССР. ф. 32, д. 7, л. 104.

26 ՀՀ ԿՊԱ, ֆ. 200, գ. 532, թ. 4։

է իրենք իրենց ապավինեն»[27]։ Վրաստանում ԱՄՆ-ի ներկայացուցիչն իր հերթին հայտարարում էր. «Միացյալ նահանգները մասնակցություն չունեցան Սևրի պայմանագրին և թեկուզ մեր կառավարությունը ճանաչել է Հայկական Հանրապետությունը, սակայն երբեք իր վրա որևէ պարտավորություն չի վերցրել՝ հայ ժողովրդին պաշտպանելու կամ ռազմական աջակցություն ցույց տալու իմաստով։ Դրա համար էլ նա չի կարող ներկա տագնապում իր վրա պատասխանատվություն վերցնել»։ Հայաստանի «դաշնակիցները», նրան հանձնելով Թուրքերի հոշոտմանը, հույս ունեին, որ պատերազմում հայերի պարտությանը կհաջորդի թուրքական ագրեսիայի ընդլայնումն Անդրկովկասում, ինչը կհանդեցնի Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև պատերազմին։

Եվրոպայի պարբերական մամուլը զայրույթով էր անդրադառնում Հայաստանի նկատմամբ Անտանտի քաղաքականությանը։ Այսպես, անգլիական ազատականների օրգան «Մանչեստր դարդիանը» 1920 թ. հունիսի 15-ին քննադատում էր Ֆրանսիայի և Անգլիայի՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականությունը, իսկ «Նեշընըլ» թերթը 1920 թ. նոյեմբերի 27-ին ուղղակի գրում էր. «Դաշնակիցները սահմանափակվեցին այն բանով, որ ապահովեցին իրենց շահերը։ Նրանք զավթեցին Սիրիան ու Միջագետքը և Հայաստանը թողեցին բախտի քմահաճույքին»։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի վիճակի չլինելով շարունակել պատերազմական գործողությունները, ստիպված ընդունեց թուրքական հրամանատարության 1920 թ. նոյեմբերի 18-ին ներկայացրած զինադադարի պայմանները։ Բանակցություններն ընթացան թուրքական զորքերի կողմից գրավված Ալեքսանդրապոլում։ Թուրքական պատվիրակության ղեկավարը Քյազիմ Կարաբեքիր փաշան էր, իսկ հայկականինը՝ Ա. Խատիսյանը։ Թուրքիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ահմեթ Մուխթարը հետևյալ պատվիրանը տվեց Քյազիմ Կարաբեքիրին. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևաբար անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնել։ Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար։ Այս պատճառով էլ մենք հաշտության սովորական պայմանագիր չպետք է կնքենք ու մեր զորքերը դուրս բերենք Հայաստանից։ Հայերին խեղդամահ անելով, միաժամանակ, մենք պետք է ջանանք չարել հարաբերություններ Եվրոպայի հետ, որի դաշնակիցն է Հայաստանը և այդպիսով պետք է հասնենք մեր նպատակներին։ Այժմ մենք պետք է նկրտենք վերջնականապես ոչնչացնել հայկական բանակը, զենքերը հայերից առգրավել և բաժանել մուսուլմաններին, հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջական կապ հաստատել ադրբեջանական Թուրքերի ու նրանց կառավարության հետ։ Ահա այն հիմնական կետերը, որոնք պետք է գրվեն հաշտության պայմանագրի հիմքում»[28]։

Բանակցություններում Ա. Խատիսյանի կողմից ներկայացված նախագծի համաձայն Հայաստանը պետք է ընդգրկեր ամբողջ Արևելյան Հայաստանը, Վանի նահանգը, Մանազկերտի շրջանը և ծովափնյա մի շերտ մինչև Ռիզե՝ 100 հազար քառակուսի վերստ տարածքով և երեք միլիոն բնակչությամբ։ Իսկ թուրք հայակերների «նախագծի» նպատակը Հայաստանին վերջ տալն էր։

Կարաբեքիր փաշան, ի պատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության նախագծի, ներկայացրեց խաղաղության պայմանագրի թուրքական նախագիծը, որի համաձայն Թուրքիային պետք է անցներ համարյա ամբողջ Հայաստանը՝ բացի Երևանի և Սևանա լճի շրջաններից։ Նախիջևանի, Շարուրի և Շախթախթի շրջանները հայտարարվում էին «ժամանակավորա-

27 ՀՀ ԿՊԱ, ֆ. 200, գ. 532, թ. 4։
28 ՀՀ ԿՊԱ, ֆ. 40/113, գ. 31, թ. 6։

պես» Թուրքիայի պաշտպանության ներքո անցած։ Փաստորեն Թուրքիայի «հովանավորությունը» (պրոտեկտորատը) հաստատվում էր նաև ձևականորեն Հայաստանին թողնված 10 հազար կմ² հողատարածքի վրա։ Այս ստրկագիծն ու Ահմեթ Մուխթարի պատվիրանը դրվեցին 1920 թ. դեկտեմբերի 2-ին արդեն հրաժարված դաշնակցական կառավարության կողմից ստորագրված Ալեքսանդրապոլի ամոթալի «խաղաղության» պայմանագրի հիմքում։ Եվ զարմանալի չէ, որ խայտառակ այդ պայմանագիրը չճանաչվեց խորհրդայնացած Հայաստանի կառավարության կողմից։

Սեջբերենք պայմանագրի առանձին հոդվածներ։ Այսպես, Ալեքսանդրապոլի պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն Հայաստանը պարտավորվում էր վերացնել պարտադիր զինվորական ծառայությունը երկրում, իսկ նրա կանոնավոր զորամասերի ընդհանուր թիվը չպետք է գերազանցեր 1500 զինվորից ու 8 թնդանոթով և 20 գնդացիրով։ 6-րդ հոդվածով, վերը նշված պայմանների կատարման վերահսկողությունը դրվում էր Թուրքիայի հատուկ քաղաքական ներկայացուցչի կամ Երևանում թուրքական հյուպատոսի վրա։ Պայմանագրի 12-րդ հոդվածը Հայաստանի բոլոր երկաթուղիները և հաղորդակցության այլ ճանապարհները դնում էր թուրքական իշխանությունների վերահսկողության տակ։ 13-րդ հոդվածով Թուրքիան իրավունք էր ստանում իր զորքերը մտցնել Հայաստան և այնտեղ ռազմական բնույթի միջոցառումներ ձեռնարկել։ Այսպիսով, Հայաստանի ինքնուրույնությունից մնում էր միայն նրա ստվերը և այն վերածվում էր սովորական մի թուրքական նահանգի։

Դեպի Անդրկովկաս թուրքերի նվաճողական ղինարշավը թուրք հեղինակները ներկայացնում են որպես «ազգային-ազատագրական պատերազմի» բաղկացուցիչ մաս։ Ավելին, 1920 թ. հաղթանակները նրանք ներկայացնում են որպես «անկախության համար պատերազմում տարած առաջին հաղթանակը»[29]։ Իսկ Ջ. Քութթայը հենց այդ հաղթանակի հետ է առնչում «ազգային-ազատագրական պայքարի» հետագա ճակատագիրը. «Եթե Կարաբեքիրը արևելքում այդ հաղթանակը տարած չլիներ, ապա ինչպիսին կլիներ պայքարի ճակատագիրը»[30],—գրում է նա։ Նույն գնահատականն է տալիս նաև Ա. Ֆ. Ջեբեսոյը, որն իր հուշերի գրքում առաջինն է հրատարակել արևմտյան ռազմաճակատի հրամանատար, Քեմալի մերձավոր զինակից Իսմեթ բեյի նամակը Քյազիմ Կարաբեքիրին. «Իմ թանկագին, իմ ամենասիրելի եղբայր Քյազիմ... Արևելյան արշավանքը մեզ և մեր գործը կյանքի կոչեց»[31]։

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո էլ քեմալականները ջանացին շարունակել Անդրկովկասում իրենց նվաճողական քաղաքականությունը, միաժամանակ չթաքցնելով իրենց հակախորհրդային էությունը։

Հաշվի չնստելով Հայաստանի խորհրդայնացմամբ առաջացած նոր իրադրության հետ, Անկարայի կառավարությունը նկրտեց կյանքի կոչել Ալեքսանդրապոլի խայտառակությունը։ 1920 թ. դեկտեմբերի 10-ին Թուրքիայի կառավարությանն ուղարկված հուշագրում Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը ասում էր. «Խորհրդային կառավարությունը հաստատ համոզմունք ունի, որ այսուհետև բացառվում է Թուրքիայի և Հայաստանի ժողովուրդների միջև թշնամական բախումների ամեն մի հնարավորություն, որ նրանց միջև նոր հարաբերությունները պիտի հաստատվեն արդարացի իրավունքների փոխադարձ ճանաչման և յուրաքանչյուր ժողովրդի ազատ և անարգել զարգացման հնարավորության ապահովման հիմքի վրա»։ Հուշագրում այնուհետև ասված էր. «Խորհրդային Հայաստանի կառավարությունը Թուր-

---

[29] Enver Ziya Karal. Türkiye Cumhuriyeti tarihi (1918–1953). Istanbul, 1954, s. 29.

[30] Cemal Kutay. Karabekir Ermenistanı nasıl yok etti? Istanbul, 1956, s. 62.

[31] Ali Fuat Cebesoy. Moskova hatıraları, s. 90–91.

քիայից ակնկալում է նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի չեղյալ հայտարարումը և նոր պայմանագրի կնքման համար մի նոր համաժողովի մասնակցության պատրաստակամությունը։ «Խորհրդային կառավարությունը դա առավել ևս անհրաժեշտ է համարում,—ասված էր այնուհետև հուշագրում,—քանի որ իր տրամադրության ներքո առկա են բազմաթիվ տվյալներ՝ վկայություններ այն մասին, որ հակառակ նոր հանգամանքներին, թուրքական հրամանատարությունը Հայաստանի գրավյալ հատվածներում ձեռնարկում է քայլեր, որոնք չեն կարող բացատրվել այլ կերպ, քան որպես շարունակություն Հայաստանի նկատմամբ անհաշտ թշնամանքի հին քաղաքականության... Խորհրդային կառավարությունը հույս ունի, որ Ազգային Մեծ ժողովի կառավարության կողմից ձեռք կառնվեն բոլոր միջոցները՝ դադարեցնելու վերոհիշյալ գործողությունները և Հայաստանի աղատադրյալ ժողովի հետ հաստատելու բարեկամական փոխհարաբերություններ»[32]։ Սակայն Անկարայի կառավարությունը ոչ միայն մերժեց վերանայել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, այլև, ինչպես երևում է 1920 թ. դեկտեմբերի 15-ի նրա հուշագրից, փորձեց «հիմնավորել» իր օրինական իրավունքները բռնախլված հայկական տարածքների նկատմամբ։ Հուշագիրը շեշտում էր. «Մենք անհրաժեշտ ենք համարում նշել, որ թուրք-հայկական խաղաղությունը ոչ թե բռնի խաղաղություն է, այլ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա հիմնված խաղաղություն և մենք մեզ ենք կցել լոկ թուրքական ազգաբնակչությամբ տարածքները»...[33]։ Իր մի այլ՝ 1921 թ. փետրվարի 6-ի հուշագրում ևս Անկարան շարունակում էր կառչել Ալեքսանդրապոլի պայմանագրից. «Մենք գտնում ենք,—ասված է այնտեղ,—որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը մարմնավորումն է ոչ թե բռնության, այլ՝ արդարության և որ նրա կիրառումն անհրաժեշտ է Կովկասում ամուր խաղաղություն հաստատելու համար»։ Հուշագրի վերջում Հայաստանից պահանջվում էր բարեխղճորեն հարգել պայմանագիրը, որը «կազմված է այնպես, որ բավարարի արդարության և հավասարության սկզբունքները»[34]։

Դժվար չէ նկատել, որ քեմալականները վճռել էին չհրաժարվել հայ ժողովրդի ու Հայաստանի նկատմամբ թուրքական «դասական» ու հարատև քաղաքականությունից։

Անկարայի կառավարությունը ոչ միայն չէր պատրաստվում իր զորքերը Ալեքսանդրապոլի շրջանից դուրս բերելու, այլև 1921 թ. սկզբին փորձեց իր նվաճումներն ընդարձակել նաև Վրաստանի հաշվին։

Արդահան ուղարկված թուրքական զորքերը հրաման ստացան գրավել Ախալցխան և Ախալքալաքը։ Միաժամանակ Բաթումին տիրելու համար սկսեց կազմավորվել Ճորոխի զորախումբը։

Կարմիր բանակի և աշխարհազորայինների ներկայությանը բախվելով, թուրքական զորքերը հարկադրվեցին Ախալցխայից և Ախալքալաքից ձեռ քաշել։ Սակայն 1921 թ. մարտի 11-ին Բաթում մտնելով, նրանք այնտեղ Քյազիմ բեյի գլխավորությամբ թուրքական վարչություն ստեղծեցին[35]։

Սակայն Բաթումի 4000-անոց մենշևիկյան զորքն անցավ քաղաքի հեղկոմի կողմը և մարտի մեջ մտավ թուրք զավթիչների դեմ։ Մինչև 11-րդ կարմիր բանակի զորամասերի ժամանումը, թուրքերն արդեն ջախջախված էին։ Մարտի 11-ին Բաթումը, Ախալքալաքն ու Ախալցխան գրավվեցին կարմիր բանակի կողմից։

Կովկասում կարմիր բանակի հաջող առաջխաղացումն ու Վրանգելի պարտությունը խորտակեցին քեմալականների համաթուրքական ցնորքները և

---

32 ДВП СССР, т. 2. М., 1985, с. 397.

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում, էջ 487—488։

35 Центральный государственный архив Республики Грузия, ф. 13, д. 124, л. 7.

նրանք որոշեցին վերսկսել 1920 թ. օգոստոսին ընդհատված մոսկովյան բանակցությունները։

Դեռ նախքան Մոսկվայի խորհրդաժողովի վերսկսելը, 1921 թ. փետրվարի 12-ին, Ստալինը նախազգուշացրել էր Լենինին այն մասին, որ Ֆ. Չիչերինին թույլ չտրվի Հայկական հարցն արծարծել այսպես, ինչպես նա արել էր առաջին խորհրդա-թուրքական ձախողանքով ավարտված խորհրդաժողովում. «Ընկեր Լենին,—գրում էր նա,—ես միայն երդվել իմացա, որ Չիչերինն, ինչ-որ մի ժամանակ թուրքերին տրամար (պրովոկացիոն) պահանջ է ուղարկել Հայաստանի օգտին Վանը, Մուշը և Բիթլիսը՝ թուրքերի խոշոր գերակշռություն ունեցող թուրքական այդ նահանգները, Հայաստանի օգտին դատարկելու վերաբերյալ։ Իմպերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել։ Անհրաժեշտ է Չիչերինին արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով հուշագրեր ուղարկելու թուրքերին»[36]։ Ինչ խոսք, Ստալինի դիրքորոշումը ձեռնտու էր թուրքական պատվիրակությանը։ Ա. Ֆ. Ջեբեսոյը գրել է. «Ինձ հաղորդեցին, որ մոսկովյան խորհրդաժողովին գործուն մասնակցություն է բերելու ընկեր Ստալինը»։ Այնուհետև խոսելով Ստալինի հետ իր հանդիպման մասին՝ նա ավելացրել է. «Ոչ մի բառ չկոչանակվեց Թուրքիայի կողմից իր հողատարածքի մի մասը Հայաստանին հանձնելու մասին»[37]։

Ստալինի հակահայկական դիրքորոշումն աներկիմաստ արտահայտված էր հենց իր իսկ կողմից գլխավորվող Ազգությունների ժողովրդական կոմիսարիատի պաշտոնաթերթ «Ժիզն նացիոնալնոստեյ» պարբերականում, որի 1921 թ. մարտի 4-ի համարում լույս էր տեսել «Հայաստանը և Թուրքիան առաջիկա խորհրդաժողովում» խորագրով առաջնորդողը։ Հոդվածի ներքո Ա. Սկաչկոյի ստորագրությունն էր, այն նույն Սկաչկոյի, որին Օրջոնիկիձեն անվանել էր «Թուրքական իմպերիալիզմի դատապաշտպան»[38]։ Սահմանափակվենք մի քանի մեջբերումներով, որոնք թույլ կտան առավել խոր ընկալել այդ հոդվածի էությունը. «Անհրաժեշտ է, որ խորհրդաժողովի մասնակից պետությունները միմյանց կատարեն այնպիսի զիջումներ, որոնք թույլ տան վերացնելու փոխադարձ ոչնչացման և անվստահության արմատները... Մինչդեռ պետական-ազգային շահեր հետապնդող Անկարայի կառավարության համար արտակարգ կարևոր է թուրքական հողատարածքի պահպանումը, գույն և ծավալումը սոցիալիստական պետությունների համար ո՛չ հողատարածքը, ո՛չ էլ ազգային միասնությունը ոչ մի դեր չեն խաղում... Այս բոլոր նկատառումները հիմնականում վերաբերում են Հայաստանին, քանի որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Ադրբեջանը Թուրքիայի հետ վիճելի ոչ մի հարց չունեն։ Խորհրդաժողովի գլխավոր հարցը հայկականն է, ուրիշ խոսքով, Թուրքիայի և Հայաստանի միջև բոլոր թյուրիմացությունների հարթումը և բարեկամական հարաբերությունների հաստատումը... Հայաստանը, անկասկած, պիտի հարկադրվի ղեկավարվել ազգային մեծագույն զոհաբերությունների վերաբերյալ լենինյան սկզբունքով։ Նա պիտի հարկադրվի հրաժարվել ոչ միայն Մեծ Հայաստանի վերաբերյալ դաշնակցականների իմպերիալիստական ծրագրերից, այլև, հնարավոր է, նույնիսկ մշապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից... Եվ եթե նույնիսկ Բիթլիսից ու Վանից գաղթականները մերօրյա Հայաստանում անկարագրելի զրկանքներ են կրում, եթե նույնիսկ Թուրքիայում մնացած հայերն այժմ շարունակում են հետապնդվել ու ճնշումների ենթարկվել կառավարության կողմից, Հայաստանին համենայնդեպս մինչև մի որոշ ժամանակ ուրիշ բան չի մնում անել, քան հաշտվել դրա հետ, համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և իր ժողովրդի այնտեղ մնացած հատ-

---

36 ЦПА ИМЛ, ф. 598, оп. I, д. 5214, л. 2.

37 Ali Fuat Cebesoy. Moskova hatıraları. s. 116.

38 ЦПА ИМЛ ф. 558, оп. I, д. 2202. л. 2.

վածները։ Հայաստանը պիտի հարկադրվի հրաժարվել այն հողատարածքներից, որոնք արդեն իսկ մտել էին անկախ Հայաստանի կազմի մեջ։ Կարսի և Արդահանի նահանգներին այսուհետև պետք չէ կռվախնձոր լինել Հայաստանի և Թուրքիայի միջև, քանի որ հարկ է ուշադրության առնել այն, որ հայկական կառավարության կողմից այդ նահանգների զավթումը զուտ իմպերիալիստական արարք էր»։

Կարիք կա՞, արդյոք, զարմանալու, որ մոսկովյան խորհրդա-թուրքական բանակցությունները անցան իր անբարոյականությամբ եզակի այս հոդվածում պարփակված «հրահանգներին» ոգով։

Տնտեսության նախարար Յուսուֆ Քեմալ բեյի գլխավորած թուրքական պատվիրակությունը Մոսկվա գնալուց առաջ այցելեց Բաքու, որտեղ հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի ղեկավարների հետ։ Դրանցում քննարկված գլխավոր խնդիրն այն էր, թե թուրք-խորհրդային առաջիկա խորհրդաժողովում ինչպես կենսագործել Հայաստանի նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի զավթողական ծրագրերը։ Այդ մասին անհերկբայորեն վկայում է փետրվարի 19-ին Ս. Նարիմանովի՝ Լենինին ուղարկած նամակը. «Թուրքերի համար ամենափափուկ հարցը հայկականն է։ Այդ հարցում նրանք առավելագույն եռանդ են հանդես բերում, որպեսզի այն իրենց օգտին լուծվի։ Հայկական հարցը կյանքի ու մահվան խնդիր է։ Եթե այս հարցում զիջելու լինենք, ապա զանգվածը չի գնա մեր հետևից։ Ի դեպ, այս հարցի մեր օգտին լուծումը մեզ ուժեղ կդարձնի։ ...Եթե հայկական հարցի պատճառով Մոսկվան անկարացիներին իրենից վանի, ապա նրանք, հուսալքված, կարող են Անգլիայի գիրկը նետվել։ Այդ ժամանակ ի՞նչ կարող է պատահել... Ես պետք է Ձեզ նախազգուշացնեմ. ընկեր Չիչերինը շփոթում է Արևելյան հարցը։ Նա մի քիչ շատ է հրապուրվում Հայկական հարցով և հաշվի չի առնում այն ամենը, ինչ կարող է պատահել, եթե անկարացիների հետ խզումը տեղի ունենա հենց Հայկական հարցի հետևանքով... Եթե ցանկանում ենք Ադրբեջանը մեր ձեռքին պահել, ապա պետք է, ինչ գնով ուզում է լինի, անկարացիների հետ ամուր դաշինք կնքենք։ Ես ընդգծում եմ. այդ դաշինքը մեզ կբերի մուսուլմանական ամբողջ Արևելքը»[39]։ Ի դեպ, մոսկովյան խորհրդաժողովի բացման նախօրեին Ն. Նարիմանովը հարկ է համարել մի անգամ ևս Լենինին նախազգուշացնել այն մասին, որ «Հայկական հարցը թուրքական պատվիրակության հետ բանակցություններում չպետք է դեր խաղա»[40]։

Բաքվում գործողության որոշակի ծրագիր մշակելուց հետո թուրքական պատվիրակությունն անցավ Մոսկվա, որտեղ խորհրդա-թուրքական բանակցություններն սկսեցին փետրվարի 26-ին։ Օգտվելով այն իրողությունից, որ փետրվարյան հեղաշրջման հետևանքով Երևանում խորհրդային իշխանությունը տապալվել էր, թուրքերը կտրականապես հրաժարվեցին բանակցություններ վարել Խորհրդային Հայաստանի պատվիրակության հետ։ Նրանք նորից հանդես եկան հողատարածքային հարցերում Բրեստ-Լիտովսկի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը հիմք համարելու պահանջով։ Իր հերթին, Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինը վերստին պահանջեց արդար լուծել Հայկական հարցը, հատկապես՝ վերադարձնել Արևմտյան Հայաստանի թեկուզ մի փոքր մասը, ինչպես նաև քեմալականների կողմից զավթված Կարսն ու Արդահանը։ Այդ պահանջը, սակայն, Ստալինի կողմից պաշտպանության չարժանացավ։

Պատահական չէ, որ բանակցություններին մասնակցած թուրք դիվանագետները, նաև թուրքական պատմագիտությունն ընդհանրապես, միաձայն գովաբանում են Ստալինին և վատաբանում Գ. Չիչերինին։ Ալի Ֆուադ Չեբեսոյը, օրինակ, գրել է. «Լենինից հետո երկրորդ դեմքը եղող և Լենինի համաձայնությամբ երկրում ամբողջ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրած

39 Նույն տեղում, ֆ. 2, оп. I, д 24503, л 1—2.

40 Նույն տեղում, գ. 24504, թ. 1։

Ստալինի կողմից մոսկովյան խորհրդաժողովին մասնակցելու վերաբերյալ մեզ ուղարկված պաշտոնական հրավերը ոչ այլ ինչ էր, եթե ոչ նկրտում՝ փոխելու խորհրդային կոմիսար Չիչերինի հաշողություն չունեցած քաղաքականությունը, որը նա վարեց Թուրքիայի նկատմամբ։ ...Չիչերինի և Կարախանի հետ հանդիպումից մենք հասկացանք, որ այդ ճանապարհով մենք որոշակի արդյունքների չենք հանգի։ Եվ որպեսզի իզուր ժամանակ չկորցնենք, մենք ազգությունների գործերի կոմիսար ընկեր Իոսիֆ Ջուղաշվիլի Ստալինից խնդրեցինք մեզ ընդունել»։ Այնուհետև, վերհիշելով Ստալինի հետ իր զրույցը, Թուրքիայի նախկին դեսպանը մեջբերել է նրա հետևյալ խոսքերը. «Հայաստանի հարցը դուք ինքներդ լուծել եք, եթե դեռ չլուծված ինչոր բան մնացել է, ապա դա ևս դուք ինքներդ լուծեք, սակայն մեզ տեղյակ պահեք վերջնական ժամկետներին»[41]։

Այս ամենը վկայում է, որ մոսկովյան խորհրդաժողովում թուրքական պատվիրակության հաջողությունը կանխորոշված էր։ Իզուր չէ, որ թուրքերը ոչ մի հարցում զիջումների չդիմեցին և հողատարածքային կարևոր ձեռքբերումների հասան։ Ահա թե Թուրքիայի բանագնացները (Քյազիմ Կարաբեքիրին ուղարկված հեռագրում) ինչպես են բնութագրել Ստալինի դերը. «Ստալինն անձնապես հայերի ոխերիմ թշնամին է... պայմանագրի կնքումն իրականացավ Ստալինի շնորհիվ»[42]։

1921 թ. մարտի 16-ին կնքված «բարեկամության և եղբայրության» թալանչիական հակահայկական պայմանագրի հիմամբ, Թուրքիային անցան Կարսի մարզը (որի կազմի մեջ էին մտնում Կաղզվանի, Արդահանի, Օլթիի, Կարսի օկրուգները) և Սուրմալուի գավառը։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա նրա հարցը նույնիսկ չարծարծվեց։ Ի դեպ, թուրք պատմաբանները չեն էլ թաքցրել իրենց խորը գոհունակությունը։ Բյուքլօզլուն գրել է. «մարտի 16-ի պայմանագրով Արդահանը, Կարսը և Արդվինը առանց հանրաքվեի անցան Թուրքիային, Բաթումի փոխարեն մենք ստացանք Սուրմալուի գավառը և Ադրբեջանի հոգատարության ներքո ստեղծվեց Նախիջևանի ինքնավար հանրապետությունը (5,5 հազար քառ. կիլոմետր տարածքով) այն պայմանով, որ Ադրբեջանն այդ հողատարածությունը չզիջի մի երրորդ պետության»[43] (այսինքն՝ բուն իրավատեր Հայաստանին—Ն. Ս.)։ Ավելին, Մոսկվայի պայմանագրի հիմամբ «Ռուսաստանը պարտավորվում է անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ նախաձեռնել անհրաժեշտ քայլեր, որպեսզի նրանք Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն իրենց են վերաբերում»[44]։

Ինչպես արդեն ասվեց, թուրքերի պահանջով խորհրդաժողովն իր դռները փակեց հայկական պատվիրակության առաջ, թեկուզ այնտեղ վճռվում էին բացառապես Հայաստանին վերաբերվող հողատարածքային հարցեր։ Դա, Խորհրդային Ռուսաստանի հետ պայմանագրային որևէ պարտավորությամբ չկապված, մեր հանրապետության գերիշխան իրավունքների աղաղակող ոտնահարում էր։ Խորհրդային Ռուսաստանն իրավական որևէ հիմք չուներ տնօրինելու նրա հողատարածքը, կամայականորեն ճշտորոշելու նրա պետական սահմանները։

Խորհրդաժողովի որոշումների մասին հայկական պատվիրակությունն իմացավ հետին թվով, որպես կատարված իրողություն։ Նրա ղեկավար Ա. Բեկզադյանը Գ. Չիչերինին ուղղված իր հայտարարության մեջ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը մեղադրեց Կարսը, Արդահանը և Սուրմալուն ապօրինաբար Թուրքիային հանձնելու մեջ։

---

[41] Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları. s. 146.
[42] R. M. İleri, Atatürk ve komunizm, İstanbul, [illegible], s. 96.
[43] Tevfik Bıyıklıoglu, Atatürk Anadoluda, 1917—1921, Ankara 1959, s. 21.
[44] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 16. 3. 1991։

Իր պատասխանում Գ. Չիչերինը հարկադրվեց բացել բանակցությունների անդրկուլիսյան երեսը, խորհրդային պետության ու բոլշևիկյան կուսակցության անձեռնհաս երևելիների անվայել միջամտությունը, որը և կանխորոշել էր խորհրդաժողովի ընթացքն ու արդյունքը։ Գ. Չիչերինը գրել է. «Ընկեր Բեկզադյանը գործն այնպես է ներկայացնում, որ կարծես բանակցություններն սկսվել են մեր քաղաքական հանձնաժողովի առաջին նիստից։ Տարօրինակ կերպով նա կատարելապես շրջանցում է այն, որ քաղաքական հանձնաժողովի նիստերն սկսեցին մեր ու Թուրքերի միջև իսկական բանակցությունների սկսելու երկու շաբաթ անց։ Բանակցությունների առավել բուռն ժամանակաշրջանն ընթացավ բոլորովին էլ ոչ հանձնաժողովի նստաշրջանում, այլ մասամբ անդրկուլիսյան բանակցություններում և մեր ազդեցիկ ընկերների ներգործության ներքո։ Քաղաքական հանձնաժողովի նստաշրջանը բացվեց միայն այն ժամանակ, երբ հիմնական հարցերն արդեն վճռված էին։ ...Պայմանագրային սահմանն այդ պատճառով բոլորովին էլ չի հանդիսանում ոչնչով չարդարացված մի նվեր Թուրքիային։ Այն պարզապես արդյունք է ամենաբուռն երկարատև մի պայքարի։ Բեկզադյանին չի կարող հայտնի չլինել, որ բանակցությունների յուրաքանչյուր քայլն ուղեկցվեց կենտկոմի որոշումներով։ Պայմանագրային սահմանագիծը ճիշտ որոշվեց բուռն վիճաբանություններից հետո, ըստ որում քայլ առ քայլ տեղի ունեցան փոխզիջումներ, իսկ մեր կողմից զիջումներն արվեցին կենտրոնական կոմիտեի որոշումներով։ Չեղավ ոչ իսկ մեկ հատիկ կարևոր հարց, որի վերաբերմամբ կենտրոնական կոմիտեն որոշում ընդունած չլիներ։ Հենց այս ամենն էլ հայտնի չէր Հայկական պատվիրակությանը»[45]։

Այսպիսին եղավ մոսկովյան առաջին քայլը քաղաքական այն անվայել խաղում, որը խորհրդային կառավարությունը վարեց Հայկական բազմաչարչար հարցի շուրջ։ Ապշեցուցիչն այն է, որ հայ ժողովուրդը, հանձին իր դիվանագիտական պաշտոնական պատվիրակության, այդ խաղից դուրս թողնվեց։ Մոսկովյան անօրինական և անբարո մեքենայությունների հետևանքով արնաթաթախ և մահամերձ Հայաստանը զրկվեց ևս մոտ 24 հազար կմ² բնիկ տարածքից։

Նորահայտ փաստաթղթերի ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն եզրահանգմանը, որ խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինի և քաղբյուրոյի ու կենտրոնական կոմիտեի միջև քեմալական Թուրքիայի նկատմամբ գոյություն ունեին տարբեր տեսակետներ։ Այդ փաստաթղթերը բացահայտում են բանակցությունների անդրկուլիսյան խաղերը և պատահական չէր, որ դրանք հենց սկզբից ընթացան հակահայկական ոգով՝ կանխորոշելով Թուրքական պատվիրակության հաջողությունը։ Լենինը, Ստալինը, Տրոցկին հակառակ Չիչերինի աջդարացի, օբյեկտիվ տեսակետին, թելադրում էին նրան «հեղափոխության դրոշակակիր քեմալական Թուրքիայի պահանջները ինչ գնով էլ լինի բավարարել»։

Այդ բոլորի արգասիքը եղավ այն, որ մարտի 16-ին կնքվեց «Բարեկամության և եղբայրության» խայտառակ, ապօրինի պայմանագիրը, որով առանց Հայաստանի Հանրապետության իմացության նրա տարածքից 24 հազ. քառ. կմ տրվեց Թուրքիային։ Այդ խայտառակ, ապօրինի գործարքը տեղի ունեցավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ի հաշիվ Հայկական Հանրապետության։

[45] АВП СССР, папка 7, оп. 4, д. 47, л. 16, 17.

НАШЕСТВИЕ КЕМАЛИСТОВ НА ЗАКАВКАЗЬЕ В 1920—1921 ГГ. И МОСКОВСКИЙ ДОГОВОР 16 МАРТА 1921 Г.

Е. К. САРКИСЯН

Резюме

Советская Россия рассматривала кемалистскую Турцию как знаменосца социалистической революции на Востоке. Армянские коммунисты своей агитацией разлагали армию и призывали армянских солдат покинуть фронт, способствуя этим продвижению кемалистских войск, якобы несущих армянам «не резню, а революцию и свободу». Архивные первоисточники свидетельствуют о том, что еще до наступления турецких войск на Армению между анкарским правительством и правительством Советской России действительно существовала договоренность о нападении турецких войск на Армению. Члены Политбюро и ЦК накануне и в дни московских советско-турецких переговоров в феврале-марте 1921 г. проводили антиармянскую политику.

Турецкие историки пытаются представить кемалистскую агрессию в Закавказье в 1920 г. как составную часть национальной войны, а территории, отошедшие к Турции по московскому договору, «как исконно турецкие земли».